



«**Հետաքննող լրագրողներ**» հասարակական կազմակերպություն  
Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219,  
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : [www.hetq.am](http://www.hetq.am)

---

ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ  
**Սասուն Խաչատրյանին**

HETQ.am-ի լրագրող **Տիրայր Մուրադյանից**  
(Էլ-փոստ tirayrmuradyan@gmail.com,

Հարգելի պարոն **Խաչատրյան**,

Համաձայն 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին:

ՀՀ ՊՆ գլխավոր քարտուղար Յ. Բատիկյանը մեր գրավոր հարցմանն ի պատասխան հայտնել է, որ նախկինում ՊՆ-ին պատկանած՝ Երևան քաղաքի Թևոսյան 4/1 հասցեի անշարժ գույքի օտարման վերաբերյալ ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեում քրեական գործ է հարուցվել (Կցում եմ ՊՆ-ի գրությունը):

1. Քրեական օրենսգրքի ո՞ր հոդվածով է հարուցվել քրեական գործը (նախաձեռնվել քրեական վարույթը):
2. Նշե՞ք Քրեական գործ հարուցելու ամիսը, ամսաթիվը և տարին:
3. Նախաքննության այս փուլում կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձինք եթե կան, նշե՞ք նրանց անունները:
4. ՀՀ ՊՆ-ն սպառազինության վարչության նախկին պետ Պողոս Պողոսյանն ի՞նչ դատավարական կարգավիճակ ունի նշված քրեական գործի շրջանակում:
5. Նախաքննության ընթացքում երբևէ արգելանք դրվե՞լ է Երևան, Թևոսյան 4/1 հասցեի անշարժ գույքի վրա: Եթե դրվել է, խնդրում եմ պարզաբանե՞ք, թե ինչպե՞ս է գույքն օտարվել և գույքի նկատմամբ սեփականության նոր իրավունք գրանցվել:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Խնդրում եմ ծանուցումը ուղարկել **Էլեկտրոնային** տարբերակով: (Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար):

Քարգանքով՝ **Տիրայր Մուրադյան**

A handwritten signature in blue ink, appearing to read 'Տիրայր Մուրադյան', written over a horizontal line.

**15 նոյեմբերի 2022 թ.**